



Լիահույս եմ, որ 2015թ. կապրենք մեր երազանքնե- րի հայրենիքում.

**ԱՌՈՍ ՂԱՅՐԱՄԱՆՅԱՆ
ՀՀ Արմավիրի մարզպետ**

**Մենք երբեք չենք սահմանափակվում մեր ձեռքբերումներով
եւ ձգտում ենք ավելիին՝ իրազործելու համակողմանի
զարգացած մարզային տնտեսության մեր տեսլականը:**

«Դե Ֆակտո» ամսագիրը, հաշվի առնելով ՀՀ Արմավիրի մարզպետ Աշոտ Ղահրամանյանի արդյունավետ աշխատանքը, ներկայացնում է մարզպետի հետ ունեցած 2014թ. տարեվերջյան ամփոփիչ հարցազրույցը:

-Պարո՞ն Ղահրամանյան, մոտեցավ ավարտին 2014թ., եթե ամփոփեք, ինչպիսի՞ն էր այն ՀՀ Արմավիրի մարզի համար:

-2014 թվականն Արմավիրի մարզի համար, ընդհանուր առմանք, դրական տեղաշարժերի տարի էր: Թեպետ անցնող տարում մարզը լուրջ վնաս կրեց ցրտահարության հետևանքով, խնդիրներ ունեցավ ռողոգման ջրի սակավության հետ կապված, այդուհանդերձ, Հանրապետության նախագահի և կառավարության անմիջական աջակցությամբ մարզային իշխանությանը հաջողվեց ոչ միայն հաղթահարել նշված դժվարությունները, այլև նախորդ տարիների համեմատությամբ շուրջ 2900 հեկտարով ավելացնել նշակովի հողատարածքներն ու գյուղմերքի արտադրության շուրջ 15 տոկոս աճ գրանցել:

Նշեմ, որ հաշվետու տարում մենք հաջողությամբ իրականացրել ենք մարզի զարգացման ծրագրի 2014 թվականի տարեկան աշխատանքային պլանով նախատեսված միջոցառումները, ինչու ոչ, նաև կյանքի ենք կոչել նախաձեռնություններ, որոնք եթե ոչ այսօր, ապա մոտ ապագայում իրենց դրական անդրադարձ կունե-

նան մարզի զարգացման և բնակչության կենսամակարդակի բարելավնան վրա:

Այս առումով կցանկանայի առանձնացնել հատկապես սեպտեմբեր ամսին Սարդարապատի հուշահամալիրում իրավիրված Արմավիրի մարզի գործարարների տնտեսական 2-րդ ֆորումը, որն իր շուրջն էր համախմբել տեղի և արտերկրի գործարարներին՝ նրանց մարզի զարգացման ծրագրերը ներկայացնելու և դրանց իրագործման շուրջ համագործակցելու նպատակով: Կարող եմ վստահորեն փաստել, որ այս համաժողովը լայն արձագանք գտավ մեր գործարարների շրջանում և առաջիկայում այն իր դրական պտուղները կտա:

Ինչևէ, հավատարիմ մնալով այս տարիների մեր որդեգրած սկզբունքին՝ մենք երբեք չենք սահմանափակվում մեր ձեռքբերումներով և ձգտում ենք ավելիին՝ իրազործելու համակողմանի զարգացած մարզային տնտեսության մեր տեսլականը:

Ի՞նչ ծրագրեր են իրականացվել 2014թ. ընթացքում:

-Անցնող տարում մարզում շարունակվել են իրականացվել տարբեր ոլորտային ծրագրեր. պետական և մասնավոր հատվածի ներդրումների արդյունքում վե-



Ցրտահարության հետեւանքով միայն պտղի արտադրության աճ չենք ունեցել, իսկ մյուս բոլոր մշակաբույսերի մասով նախորդ տարվա համեմատությամբ աճը կազմել է 5-30 տոկոս:

Պանորոգվել է 11 դպրոց, ևս 5-ն ապահովվել է լոկալ ջեռուցման համակարգով, 13 համայնքում, այդ թվում՝ Եջմիածին քաղաքում, բարելավվել են ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերը, իիմնանորոգվել է 6 կմ և ընթացիկ պահպանության է հանձնվել 201 կմ հանրապետական, միջպետական և մարզային նշանակության ավտոճանապարհ, մեծածավալ աշխատանքներ են իրականացվել ոռոգման համակարգի ենթակառուցվածքների վերազինման և վերականգնման ուղղությամբ:

-Ինչպիսի՞ն էր 2014թ.՝ որպես գյուղատնտեսական տարի, ինչպիսի՞ն էր բերքատվության մակարդակը, մթերման գործընթացը:

-Ինչպես արդեն նշեցի, անկախ այն դժվարություններից, որոնք մարզն ունեցավ անցնող գյուղատնտեսական տարվա ընթացքում, պետական աջակցության արդյունքում մեզ հաջողվեց ապահովվել գյուղմթերքի և արտադրության, և մթերման ծավալների աճ:

Թվային արտահայտությամբ ասեմ, որ Արմավիրի մարզում 2014 թվականին մթերվել է 12 հազար 350 տոննա պտուղ-բանջարեղեն և 70 հազար 213 տոննա խաղող: Մթերումների ընդհանուր ծավալը կազմել է 82 հազար 563 տոննա, որը 28 տոկոսով գերազանցել է նախորդ տարվա ցուցանիշը:

Ցրտահարության հետևանքով միայն պտղի արտադրության աճ չենք ունեցել, իսկ մյուս բոլոր մշակաբույսերի մասով նախորդ տարվա համեմատությամբ աճը կազմել է 5-30 տոկոս:



Հավելեմ, որ մթերման գործընթացն Արմավիրի մարզում իրականացվել է առանց խոչընդոտների, և միշտ գտնվել է ին անմիջական հսկողության ներքո: Կարող են ասել, որ մեր գյուղացին բերքի իրացման լուրջ խնդիր չի ունեցել:

-Ի՞նչ ձեռքբերումներ են արձանագրվել առողջապահության, կրթամշակութային ոլորտներում:

-Առողջապահության ոլորտում որպես ձեռքբերում կցանկանայի առանձնացնել Համաշխարհային բանկի միջոցներով արդեն ավարտին մոտեցող «Մեծամորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի պոլիկլինիկայի վերանորոգման և Ակնալիճ համայնքի բուժման աշխատանքները:

Կցանկանայի տեղեկացնել նաև, որ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի և Չեխիայի Հանրապետության Մորովկի-Սիլեզյան երկրամասի միջև 2014 թվականի հունվարի 31-ին Չեխիայում ստորագրված փոխընդունման հուշագրի շրջանակներում առողջապահության ոլորտում համագործակցության ընդլայնման նպատակով հիկունքեր անսին իմ իրավերով Հայաստանում էր Չեխիայի Հանրապետության առողջապահության նախարարի խորհրդականի գլխավորած պատվիրակությունը, որի կազմում էին Արմավիրի բարեկամ-գործների Մորովկի-Սիլեզյան երկրամասի բժշկական հաստատությունների ղեկավարները: Պատվիրակության այցի շրջանակներում Արմավիրի բժշկական կենտրոնի և Օպավայում Սիլեզյան հիվանդանոցի միջև ստորագրվեց փոխգործակցության համաձայնագիր, որը ենթադրում է ախտորոշչի կենտրոնի բացում, միջիկանդանոցային կապերի հաստատում, ինչպես նաև հա-



մատեղ այլ ծրագրերի իրականացում: Վաղարշապատի հիվանդանոցի հետ ևս տարբեր ուղղություններով համագործակցության ծրագրեր առաջարկվեցին:

Իսկ ինչ վերաբերում է կրթամշակութային ծեռքբերումներին, նշեմ, որ մարզում նշված ոլորտների զարգացման նպատակով 2014 թվականին կազմակերպվել և իրականացվել են մի շարք ծրագրեր, միջոցառումներ, որոնք հնարավորություն են տվել ավելի ռացիոնալ օգտագործել մեր ունեցած ներուժը:

Ասեմ, որ մեզ նոտ ապահովվել է կրթական պետական ծրագրերի լիարժեք իրականացումը, մի շարք հանրակրթական դպրոցներում հաճալրվել է նյութատեխնիկական բազան, վերանորոգվել և կահավորվել են լաբորատորիաները, մարզադահլիճները, շախմատի և ռազմագիտության դասասենյակները:

Մարզի դպրոցականներն ակտիվ մասնակցություն են ունեցել տարբեր օլիմպիադաների, մրցույթների՝ գրադարաններով մրցանակային տեղեր:

Միայն մարզպետարանի մշակութային միջոցառումների տարեկան ծրագրով իրականացվել է 12 մեծամասշտար միջոցառում, ինչպես նաև աջակցություն է ցուցաբերվել Մշակույթի նախարարության և այլ կազմակերպությունների կողմից իրականացված մի շարք հանրապետական միջոցառումների: Ապահովվել է մարզի տաղանդավոր երգիշ-երգչուիդների, պարային համույթների, նշակույթի և արվեստի այլ ոլորտների ներկայացուցիչների մասնակցությունը մարզային, հանրապետական, միջազգային մրցույթներին, փառատոններին և միջոցառումներին, որտեղ նրանք ունեցել են բազմաթիվ հաջողություններ:

Դաշվետու տարում պետական բյուջեի միջոցներով ավարտվել են Այգեշատ համայնքի թարգմանչաց եկեղեցու՝ ծրագրով նախատեսված վերականգնման աշխատանքները: Բարերարների միջոցներով ավարտվել են Արմավիր քաղաքի Սուրբ Գրիգոր Նարեկացի և Զանֆիդա համայնքի Սուրբ Կարապետ եկեղեցիների կառուցման աշխատանքները, բարեկարգվել է Բամբակաշատ համայնքի Սուրբ Աստվածածին եկեղեցին և հարակից տարածքը: Նշեմ նաև, որ հանայնքային միջոցներով Դողսի, Փարաքարի, Թաթրովի, Գեղակերտի, Տանձուտի համայնքային մշակույթի տներում կատարվել են վերանորոգման աշխատանքներ:

-Ի՞նչ ծրագրեր եք նախատեսում իրականացնել 2015թ. ընթացքում:

-Վստահեցնում եմ, որ 2015 թվականը մարզային իշխանության

2015 թվականը մարզային իշխանության համար լինելու և բուռն աշխատանքի տարի, աշխատանք, որից մենք երեք չենք խուսափել, քանի որ զինված ենք մարզում կյանքն ավելի լավ դարձնելու, համայնքների սոցիալ-կենցաղային նկարագիրը փոխելու և մարդկանց համար առավել արժանապատիկ կենսակերպ ապահովելու վճռականությամբ:

Համար լինելու և բուռն աշխատանքի տարի: Աշխատանք, որից մենք երեք չենք խուսափել, քանի որ զինված ենք մարզում կյանքն ավելի լավ դարձնելու, համայնքների սոցիալ-կենցաղային նկարագիրը փոխելու և մարդկանց համար առավել արժանապատիկ կենսակերպ ապահովելու վճռականությամբ:

Գալիք տարում կշարունակվեն կրթական, մշակութային, սպորտային, առողջապահական հաստատությունների հիմնանորդական և վերագինմանը, համայնքների գազաֆիլկացմանը, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերանորոգմանը, էլեկտրամատակարարման հուսալիության բարձրացմանն ուղղված, ինչպես նաև ճանապարհաշինական և քաղաքաշինական մի շարք ծրագրեր:

Որպակական նոր մակարդակի վրա կղործի և կընդլայնվի փոխադրժակցությունն արտերկրի մեր գործընկերների հետ, որի ուղղությամբ այսօր արդեն լուրջ քայլեր են ձեռնարկվել:

-Ի՞նչ ակնկալիքներ ունեք նոր տարուց:

-Նոր տարին ինքնին ակնկալիքների տոն է: Թեև գիտակցական կյանքի ընթացքում նոր տարվա ընկալումը փոխվում է, այնուամենայնիվ, կա մի բան, որը բնորոշ է բոլոր տարիքային խմբերին. հույսն է և հրաշք սպասումը:

Եվ ես լիահույս եմ, որ գալիք 2015 թվականը մեր երկրի համար նոր առաջնորդացի և հաջողությունների դրույթ է բացելու, և ավելի քան մոտ է այն օրը, երբ մենք կապրենք մեր երազած իրականության պայմաններում և մեր երազանքների հայրենիքում:

-Զեր ամանորյա շնորհավորանքը:

-Շնորհավորելով համայն հայությանը գալիք Ամանորի և Սուրբ ծննդյան տոնների առթիվ՝ ցանկանում եմ, որ 2015 թվականը բոլորիս համար լինի խաղաղ արարման տարի և բերի նոր հաղթանակներ ու ավելացնի վստահությունը սեփական ուժերի հանդեպ: Թող խաղաղությունն ու երջանկությունը գերիշխեն բոլոր օջախներում:

Դարցագրույցը՝ Սուրաննա Թամազյանի